«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 08/02

ք.Երևան,Արշակունյաց 5.417 սենյակ 24.07.2017թ. ժամը 15:00

Համաձայն, 26.06.2017թ. «Ինժիներ Լիգա» ՓԲԸ-ի տնօրեն՝ Սամվել Մկրտչյանի, 26.06.2017թ. թիվ 19/17 գրությամբ՝ «Ակադեմիկոս Ի.Վ.Եղիազարյանի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ» ՓԲԸ-ի տնօրեն՝ Ս.Երոյանի կողմից՝ «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում ստացվեն դիմումներ «Ինժիներ Լիգա» ՓԲԸ-ի և «Ակադեմիկոս Ի.Վ.Եղիազարյանի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ» ՓԲԸ-ի սնանկության գործերով ժամանակավոր կառավարիչ՝ Գևորգ Գևորգյանի գործողությունների /անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման նպատակով, կառավարչի վարքագծի վերաբերյալ, կարգապահական վարույթ հարուցելու և դիմումներում նշված փաստական հանգամանքների քննության համար՝ ս/թ-ի հուլիսի 24-ին ժամը 15.00-ին՝ հրավիրված «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստին.

ԾԱՆՈՒՑՎԱԾ ԷԻՆ՝

Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Գևորգյանը
Հանձնաժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը
Հանձանաժողովի անդամ՝ Հենրիկ Մարտիկյանը
«Ինժիներ Լիգա» ՓԲԸ-ի և «Ակադեմիկոս Ի.Վ.Եղիազարյանի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ» ՓԲԸ-ի սնանկության գործերով ժամանակավոր կառավարիչ՝ Գևորգ Գևորգյանը:
Դիմումատու՝ «Ինժիներ Լիգա» ՓԲԸ-ի տնօրեն՝ Սամվել Մկրտչյանը
Դիմումատու՝ «Ակադեմիկոս Ի.Վ.Եղիազարյանի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ» ՓԲԸ-ի տնօրեն՝ Ս.Երոյանը և «Ակադեմիկոս Ի.Վ.Եղիազարյանի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ» ՓԲԸ-ի տնօրեն՝ Ս.Երոյանը

ՄԱՄՆԱԿՑԵՑԻՆ՝

Հանձնաժողովի Նախագահ՝ Տիգրան Հարությունյանը
Հանձնաժողովի անդամ՝Հարություն Գևորգյանը
Հանձնաժողովի անդամ՝Ռուբեն Խալաթյանը
Հանձանաժողովի անդամ՝ Հենրիկ Մարտիկյանը
«Ինժիներ Լիգա» ՓԲԸ-ի և «Ակադեմիկոս Ի.Վ.Եղիազարյանի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ» ՓԲԸ-ի սնանկության գործերով ժամանակավոր կառավարիչ՝ Գևորգ Գևորգյանը:
Դիմումատուներ՝ «Ինժիներ Լիգա» ՓԲԸ-ի տնօրեն՝ Սամվել Մկրտչյանը և «Ակադեմիկոս Ի.Վ.Եղիազարյանի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ» ՓԲԸ-ի տնօրեն՝ Ս.Երոյանը պատշաճ ծանուցված էին նիստի տեղի և ժամի վերաբերյալ,բայց նիստին չէին ներկայացել:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

26.06.2017թ. «Ինժիներ Լիգա» ՓԲԸ-ի տնօրեն՝ Սամվել Մկրտչյանի, 26.06.2017թ. թիվ 19/17 գրությամբ՝ «Ակադեմիկոս Ի.Վ.Եղիազարյանի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ» ՓԲԸ-ի տնօրեն՝ Ս.Երոյանի կողմից ներկայացված դիմումների հիմքով «Ինժիներ Լիգա» ՓԲԸ-ի և «Ակադեմիկոս Ի.Վ.Եղիազարյանի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ» ՓԲԸ-ի սնանկության գործերով ժամանակավոր կառավարիչ՝ Գևորգ Գևորգյանի գործողությունների /անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման, դիմումում նշված փաստական հանգամանքների քննության և սնանկության գործով կառավարչի վարքագծի վերաբերյալ, կարգապահական վարույթ հարուցելու հարցը:

ԼՍԵՑԻՆ՝
Կարգապահական Հանձնաժողովի նախագահ՝ Տիգրան Հարությունյանը ներկայացրեց, 26.06.2017թ. «Ինժիներ Լիգա» ՓԲԸ-ի տնօրեն՝ Սամվել Մկրտչյանի և 26.06.2017թ. թիվ 19/17 գրությամբ՝ «Ակադեմիկոս Ի.Վ.Եղիազարյանի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ» ՓԲԸ-ի տնօրեն՝ Ս.Երոյանի դիմումները և կից փաստաթղթերը, առաջարկեց հանձնաժողովի անդամներին քննարկել սնանկության գործով կառավարիչ՝ Գևորգ Գևորգյանի l նկատմամբ «ԿՀ գործունեության և ՍԳԿ-ի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման»Կարգի 1.4 կետի հիմքով,կարգապահական վարույթ հարուցելու հարցը:

Հանձնաժողովում նախագահողը հարցը դրեց քվեարկության

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝
Կողմ - 4
Դեմ – 0
Ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ՝
26.06.2017թ-ի «Ինժիներ Լիգա» ՓԲԸ-ի տնօրեն՝ Սամվել Մկրտչյանի և 26.06.2017թ. թիվ 19/17-06 գրությամբ՝ «Ակադեմիկոս Ի.Վ.Եղիազարյանի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ» ՓԲԸ-ի տնօրեն՝ Ս.Երոյանի դիմումների հիմքով,«Ինժիներ Լիգա» ՓԲԸ-ի և «Ակադեմիկոս Ի.Վ.Եղիազարյանի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ» ՓԲԸ-ի սնանկության գործերով ժամանակավոր կառավարիչ՝ Գևորգ Գևորգյանի գործողությունների /անգործության/, դիմումում նշված փաստական հանգամանքների քննության և սնանկության գործով կառավարչի վարքագծի վերաբերյալ, հարուցել կարգապահական վարույթ:

ԼՍԵՑԻՆ՝
Հանձնաժողովի նախագահ՝Տիգրան Հարությունյանը ներկայացրեց ստացված Դիմումները կից փաստաթղթերը և առաջարկեց հանձնաժողովի անդամներին քննարկել դիմումում նշված հանգամանքները,սնանկության գործով կառավարիչ՝Գևորգ Ֆելիքսի Գևորգյանի որպես «Ինժիներ Լիգա» ՓԲԸ-ի և «Ակադեմիկոս Ի.Վ.Եղիազարյանի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ» ՓԲԸ-ի սնանկության գործերով ժամանակավոր կառավարիչ, գործողությունների /անգործության/ փաստական հանգամանքները և սնանկության գործով կառավարչի վարքագծի նկատմամբ հայտնել կարծիք:
Հանձնաժողովի անդամ՝ Ռ. Խալաթյանը,առաջարկեց լսել ներկա գտնվող սնանկության գործով կառավարիչ՝Գ.Գևորգյանին և նրա ներկայացրած փաստարկները:
Հանձնաժողովի նախագահ՝Տ.Հարությունյանը ձայնը տվեց,սնանկության գործով կառավարիչ՝ Գ.Գևորգյանին,ով մասնավորապես նշեց,որ մի քանի ամիս առաջ այս հարցը այլ դիմումի հիմքու արդեն լսվել է և դիմումատուն նորից դիմել է նույն հարցով և նույնատիպ դիմում է ներկայացրել այլ կազմակերպություն,որտեղ ինքը հանդիսանում է ժամանակավոր կառավարիչ:ՍԳԺ կառավարիչը նշեց,որ «Ակադեմիկոս Ի.Վ.Եղիազարյանի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ» ՓԲԸ-ի սնանկության դիմումը 20.03.2017թ-ին մերժվել է դատարանի կողմից,իսկ ինքը արդեն չի հանդիսանում այդ ընկերության ժամանակավոր կառավարիչը և որևէ գործողություն կամ անգործություն չի կարող իրեն թույլ տալ,իսկ դիմումատուն սնանկ չէ,ուստ սնանկության վարույթում նրա ոչ մի շահը կամ այլ վնասներ չի կարող կրել կամ քննարկվել արդեն սնանկության գործով ծամանակավոր կառավարիչ չհանդիսացող անձի որևէ մեկ այլ անձի կամ կազմակերպության օգտին վճարովի ծառայությունների մատուցման կամ չմատուցման հարցեր:Ինչ վերաբերվում է «Ինժիներ Լիգա» ՓԲԸ-ի ներկայացված դիմում-բողոքին ապա հայտնեմ,որ այդ եկու դիմումատուներն են հանդիսանում փոխկապակցված և իրենց դիմումներն էլ գրված է մի մարդու կողմից և ներառում են նույն հիմնավորումները և առանց ոչ մի փաստական հանգամանքի կամ ապացույցի:

Իր կողմից կառավարիչը նշեց,որ ինքը չի ճանաչում դիմումներում նշված Գագիկ Գալստյանին, ներկա պահին չի աշխատում ոչ մի իրավաբանական գրասենյակում և չի համագործակցում այլ կազմակերպությունների հետ,որոնք կհամապատասխանեին դիմումներում նշված հանգամանքների հետ և կարող էին բերել իր կողմանակալության դրսևորումներին և նմանատիպ կասկածների բացակայության պարագայում,իր կողմից **«ՍԳԿԿ» ԻԿԿ-ին** տեղեկացնելու կամ հայտնելու փաստեր չեն եղել:

Հանձնաժողովի անդամները քննարկեցին հարցը ,մասնավորապես հանձնաժողովի անդամ Հ.Մարտիկյանը հայտնեց այն կարծիքը,որ ներկայացված դիմումում դիմումատուն փորձել է ներկայացնել իր նախկին կարծիքը,որի վերաբերյալ հանձնաժողովը արդեն հայտնել է իր դիրքորոշումը,իսկ նոր դիմումատուն,նույնպես նմանատիպ դիրքորոշում է որդեգրել,որը ըստ էության կայանում է նրանում,որ սնանկության գործով ժամանակավոր կառավարչի և նախկինում որպես փաստաբան հանդես եկած նույն մարդու գործարար կապը պարտատեր ընկերության հետ, որպես կառավարչի վարքագծի կանոնների խախտում,որի մասին կառավարչ պետք է հայտներ ինքնակարգավորվող կազմակերպությանը/«Սնանկության գործով կառավարչ Վարքագծի կանոնագիրք»-ի Էթիկայի Կանոններ՝6-րդ հոդված,6.3 կետ/ և դրանից բխող այն կասկածները և մտավախությունները,որ կառավարիչը կարող է կողմնակալություն անի:

Բայց դիմումատուն հաշվի չի առել,որ նույն հոդվածի՝6.2 կետը սահմանում է,որ կառավարիչը դա պետք է անի իր անկողմնակալությանմ վերաբերյալ հիմնավոր կասկածներ ունենալու դեպքում,այսինքն կառավարիչը պետք է կասկածի կամ պետք է ունեա տարակույս,որ իր նախկին գործարար կապը կարող է իրեն խանգարել վարելու այդ գործը և լինել անկողմնակալ, որպիսի դեպքում միայն նրան պարտադրվում է հայտնել այդ կասկածանքի մասին՝ Ինքնակարգավորվող կազմակերպությանը և արդեն **հիմնավորել** այն:

Տվյալ դեպքում Գ.Գևորգյանը հանդիսացել է «Ակադեմիկոս Ի.Վ.Եղիազարյանի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ»ՓԲԸ-ի սնանկության գործով ժամանակավոր կառավարիչ և կատարել է ընդհամենը մի գործողություն՝գրությամբ տեղյակ է պահել պարտապան ընկերությանը սնանկության դիմումի և այդ փուլում պարտապանի պարտականությունների վերաբերյալ և ստացել է պատասխան որ պահանջը անբողջությամբ բավարարված է:

Այլ գործողություններ ժամանակավոր կառավարիչը այս դեպքում չի կատարել և նրա անաչառության մասին քննարկելու նյութ չկա,բացի դրանից սնանկության գործը 20.03.2017թ-ին մերժվել է և ընկերությունը չի հանդիսանում սնանկության վարույթի կողմ և չունի ոչ մի կապ նախկին սնանկության գործով ժամանակավոր կառավարիչ հետ և զարմանալի է շահագրգռվածությունը՝Գ.Գևորգյանին տույժի ենթարկելու մինչև անգամ՝ Ինքնակարգավորվող կազմակերպության անդամությունից զրկելու մեջ:

Հանձնաժողովի նախագահ՝Տ.Հարությունյանը համաձայնեց արտահայտած կարծիքին և ավելացրեց,որ ինքը նույնպես մնում է այն կարծիքին,որ դիմումատուները այս դեպքում հանդիսանում է իրավաբանական անձնք և նրանք պետք է ապացուցներ ներկայացնեին կամ նշեին թե իրենց օրենքով երաշխավորված որ իրավունքն է խախտել սնանկության գործով կառավարչի վարքագծի այս կամ այն խախտումը:

«Ակադեմիկոս Ի.Վ.Եղիազարյանի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ»ՓԲԸ-ի տնօրեն՝Ս.Երոյանը և «Ինժիներ Լիգա» ՓԲԸ-ի տնօրեն՝ Սամվել Մկրտչյանը,նման նշումներ չեն արել և չեն վկայակոչել ոչ մի փաստ, որ սնանկության գործով ժամանակավոր կառավարիչ՝Գ.Գևորգյանի,նախկինում պարտատիրոջ հետ ունեցած գործնական կապը ազդել է կառավարչի անաչառության,անկողմնակալության վրա և դրանով խախտվել է իր կամ իր ղեկավարած կազմակերպության որևե օրինական շահ,ավելին նա իր բերած փաստերով և կատարած վճարումով ապացուցել է,որ պարտատիրոջ հանդեպ իսկապես ունեցել է ժամկետանց պարտավորություն,որը մարել է,այսինքն սնանկության վարույթը հասել է իր տրամաբանական ավարտին,օրենքով սահմանված կարգով,դատարանի 20.03.2017թ-ի վճռով,մերժվել է,որով և վերացել են սնանկության գործով ժամանակավոր կառավարիչի իրավասությունները և վնաս պատճատելու մտավախության հիմքերը,բայց դարձել է փաստ,որ կառավարիչը ունենալով լիազորություններ,ոչ մի անգամ այդ լիազորությունները չի օգտագործել պարտապան կազմակերպության դեմ,ի վնաս պարտապանի:

Ինչ վերաբերվում է դիմումատուի այն պահանջին,որ բերված փաստերի հիմքով սկսել կառավարչի որակազրկման գործընթաց,ապա նշեմ,որ նման գործընթացի սկիզբ կարող է հանդիսանալ օրենքի խախտումները այլ ոչ թե առանց որևէ մի ապացույցի մտածածին տարակուսանքները, որը չի կարող, անգամ կարգապահական վարույթ սկսելու հիմք հանդիսանալ:

Հանձնաժողովի անդամ՝Ռ.Խալաթյանը և Հ.Գևորգյանը նույնպես համաձայնեցին այն մտքին,որ դիմումի փաստական հանգամանքները ուսումնասիրությունից հետո պարզ է,որ դրանք բավարար չեն կարգապահական վարույթ հարուցելու համար:

Հանձնաժողովի նախագահ՝Տ.Հարությունյան առաջարկը դրեց քվեարկության՝

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝

Կողմ - 4

Դեմ – 0

Ձեռնպահ – 0

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ՝

1.«Ակադեմիկոս Ի.Վ.Եղիազարյանի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ»ՓԲԸ-ից՝«ՍԳԿԿ» ԻԿԿ-ում ստացվել է թիվ 17/17-04 և 26.06.2017թ-ի «Ինժիներ Լիգա» ՓԲԸ-ի տնօրեն՝ Սամվել Մկրտչյանի դիմումների հիմքով «Ակադեմիկոս Ի.Վ.Եղիազարյանի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ»ՓԲԸ-ի սնանկության գործով նախկին ժամանակավոր կառավարիչ և «Ինժիներ Լիգա» ՓԲԸ-ի սնանկության գործով ժամանակավոր կառավարիչ ՝ Գևորգ Ֆելիքսի Գևորգյանի գործողությունների/անգործության/ նկատմամբ հարուցված կարգապահական վարույթ կարճել՝ փաստերի /ապացույցների/ բացակայության պատճառաբանությամբ:

2.Սույն Եզրակացությունը սահմանված ժամկետում ներկայացնել Դիտորդ Խորհրդին հետագա որոշում կայացնելու նկատառումով:

Հանձնաժողովի Նախագահ՝ Տ.Հարությունյան

Հանձնաժողովի անդամ՝ Հ.Մարտիկյան

Հանձնաժողովի անդամ՝ Ռ.Խալաթյան

Հանձնաժողովի անդամ՝ Հ.Գևորգյան